



ՄԻ ԱՊՐԻՐ ԱՆՅՅԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ. ՄՏԱՎՈՐ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(Երկրորդ ռազմավարություն)

Ոչինչ այնքան հաճախ չի ծանրաբեռնում մեզ՝ ստիպելով թշվառ զգալ, ինչպես մեր անցյալը, և կարևոր չէ, թե դա մեզ հետապնդում է միանգամայն անպետք կապվածությունների, ծեծված բանաձևերի բազմակի կրկնության, թե անցյալի հաղթանակների ու պարտությունների ըմբռնիմամբ: Դուք պետք է գիտակցաբար պատերազմ հայտարարեք անցյալին, որպեսզի ստիպեք ինքներդ ձեզ արձագանքել ներկայի իրադարձություններին: Եղեք անողորմ ինքներդ ձեզ հետ, մի կիրառեք սովորական և մաշված հնարքները: Երբեմն շատ կարևոր է շարժվել նոր ուղղությամբ, նույնիսկ եթե դա ռիսկային է: Իքնին հասկանալի է, որ դուք կարող եք վտանգել ձեր հարմարավետությունն ու հարմարակեցությունը, սակայն դրանով իսկ կարող եք նաև թշնամուն հանկարծակիի բերել և շփոթեցնել նրան անկանխատեսելիությամբ: Մտավոր պարտիզանական պատերազմ վարեք, որում անհնար է որոշել, թե որտեղ է գտնվում առաջնագիծը, այնտեղ չկան խոցելի ամրոցներ՝ ամեն ինչ շարժուն է և փոփոխական:

ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ոչ ոք չկարողացավ ավելի արագ բարձրանալ իշխանության, քան Նապոլեոն Բոնապարտը (1769-1821): 1793 թվականին նա ֆրանսիական հեղափոխական բանակի կապիտանից դարձավ բրիգադի գեներալ, իսկ 1796-ին՝ Իտալիայում ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար և, պատերազմելով ավստրիացիների դեմ, նույն թվականին ջախջախեց նրանց, իսկ հետո ևս մեկ անգամ՝ երեք տարի անց: Նա դարձավ Ֆրանսիայի առաջին հյուպատոսը 1799 թվականին, կայսր՝ 1804 թվականին: Մեկ տարի անց՝ 1805 թվականին, Նապոլեոնը բառացիորեն ջախջախեց Ավստրիայի և Ռուսաստանի բանակները Աուստերլիցի ճակատամարտում:

Շատերի համար Նապոլեոնը ավելին էր, քան պարզապես հրամանատար: Նա հանճար էր, պատերազմի Աստված: Պրուսիայի ռազմական ղեկավարները, օրինակ, կարծում էին, որ նա պարզապես աներևակայելի հաջողակ է: Նրանց կարծիքով, Նապոլեոնին օգնում էր այն հանգամանքը, որ նա գործում էր աշխույժ և հաստատակամ, իսկ նրա հակառակորդները դանդաղ էին ու թույլ: Այ, եթե նա գոնե մեկ անգամ հանդիպեր պրուսական բանակին, ապա լուրջ պարտություն կկրեր:

Պրուսական զորավարների թվում էր Ֆրիդրիխ Լյուդվիգը՝ իշխան Հոհենլոե-Ինգելֆինգենը (1746-1818): Հոհենլոեն Գերմանիայի ամենահին ազնվական տոհմերից մեկի ժառանգն էր, նրա նախնիները հայտնի դարձան մարտադաշտերում իրենց փայլուն հաղթանակներով: Նա նույնպես ծառայությունը սկսեց երիտասարդ տարիքում, ծառայեց հենց Ֆրիդրիխ II Մեծի (1712-1786) հրամանատարության ներքո, մի մարդով կարողացավ առանց որևէ մեկի օգնության մեծարել Պրուսիան, այն դարձնել հզոր տերություն: Հոհենլոեն կոչումներում աճելով, դեռ հիսուն տարին չբոլորած, հասավ գեներալի կոչմանը (պրուսական չափանիշներով շատ վաղ տարիքում):

Ըստ Հոհենլոեի, պատերազմում հաջողության գրավականը կազմակերպվածությունն էր, կարգապահությունը և լավագույն ռազմավարությունների կիրառումը, որոնք երբևէ մշակվել էին փառապանց ռազմական գործիչների կողմից: Պրուսացիները այս բոլոր առաքինությունների օրինակն էին: Պրուսական զինվորներին անվերջ խստավարժեցնում էին՝ հասցնելով ամենաբարդ տարրերի կատարման ճշգրտության ավտոմատացմանը: Պրուսական գեներալները մանրակրկիտ ուսումնասիրում էին Ֆրիդրիխ Մեծի մարտերն ու հաղթանակները: Պատերազմը նրանց համար մաթեմատիկական հաշվարկների նման մի բան էր և կախված էր մնայուն սկզբունքների ու հավերժական բանաձևերի ճիշտ կիրառումից: Նապոլեոնը պրուսական հրամանատարների համար տաքարյուն կորսիկացի կտրիճ էր, ով կանգնած էր քաղաքացիական հասարակության անկառավարելի ամբոխի գլխին: Նրանք համոզված էին, ֆրանսիացիներին կարող են գլխովին ջախջախել, քանզի գերազանցում էին նրանց և զիտելիքներով, և կովելու ունակությամբ: Բախվելով պրուսացիների հոյակապ, կարգապահ բանակին ֆրանսիացիները կերերան և կփախչեն: Անպարտելի Նապոլեոնի առասպելը կպսակագերծվի, և Եվրոպան թեթևացած կվերադառնա իր նախկին կյանքին:

1806 թվականի օգոստոսին Հոհենլոեն և նրա համախոհները վերջապես ստացան այն, ինչի մասին խոսում էին այդքան երկար ժամանակ: Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Վիլհելմ III-ը, հոգնելով Նապոլեոնի անվերջ խախտած խոստումներից, որոշեց, որ վեց շաբաթ անց պատերազմ կհայտարարի նրան: Այդ ընթացքում, նա գեներալներին հանձնարարեց պատրաստել ֆրանսիացիների ջախջախման պլանը: Հոհենլոեն հիացած էր: Այս արշավը կդառնար նրա կարիերայի պսակը:

Հոհենլոեն տարիներ շարունակ մտածում էր, թե ինչպես պետք է հաղթեր Նապոլեոնին, և հենց առաջին հանդիպման ժամանակ զինվորականներին ներկայացրեց իր պլանը: Մի քանի ճշգրիտ անցումներ և պրուսական բանակի դիրքերը կհանդիսանան ֆրանսիացիների վրա հարձակվելու իդեալական գրավական, երբ նրանք սկսեն հարձակվել հարավային հատվածում: Շեղ մարտկարգով գրոհը, որը Ֆրիդրիխ Մեծի սիրելի մարտավարությունն էր, թույլ էր տալու հասցնել անդիմադրելի հարված հսկայական ուժով: Մյուս՝ վաթսուն-յոթանասունամյա հրամանատարները, նույնպես ներկայացրեցին իրենց պլանները, բայց դրանք բոլորն էլ ռազմիկ-թագավորի մարտավարական հնարքների կրկնեղությունն էր տարբեր ձևերով:

Բանավեճը վերածվեց կատաղի վիճաբանության, որը շարունակվեց շաբաթներ շարունակ: Ի վերջո, Ֆրիդրիխ Վիլհելմ III-ը միջամտեց գործին և ինքն էլ մշակեց փոխզիջումային ռազմավարություն, որը կարող էր բավարարել բոլոր գեներալներին:

Երկիրն արդեն կանխատեսում էր առատության մոտալուտ սկիզբը, սպասվում էր, որ ոսկե ժամանակները նորից կվերադառնան, ինչպես լավագույն պրուսական թագավորների ժամանակ էր: Գեներալները հասկանում էին, որ Նապոլեոնը չի կարող տեղյակ չլինել իրենց պլանների մասին՝ նա հիմնալի լրտեսներ ուներ: Եվ այնուամենայնիվ, առավելությունը Պրուսիայի կողմն էր, և երբ պատերազմի մեքենան գործադրվեր, արդեն ոչինչ չի կարող կանգնեցնել այն:

Հոկտեմբերի 5-ին՝ պլանավորված պատերազմը հայտարարելուց մի քանի օր առաջ, գեներալները ցնցող լուր ստացան: Ռազմական հետախուզության ջոկատը բացահայտեց, որ նապոլեոնյան բանակի ստորաբաժանումները, որոնք, ըստ նրանց կարծիքի ցրվել էին, առաջ են շարժվել դեպի արևելք, միավորվել և այժմ կենտրոնանում են Պրուսիայի հարավում: Հետախուզական ջոկատը գլխավորող կապիտանը զեկուցեց, որ ֆրանսիացի զինվորները արշավային պայուսակներով շարժվում են շարքերով: Մինչ պրուսական բանակը գորքերի մատակարարումը ապահովելու համար օգտագործում էր սննդի սայլակառքեր, ֆրանսիացիներն իրենց վրա էին կրում անհրաժեշտ պարագաները, ինչը մեծացնում էր շարժունակությունը և թույլ էր տալիս անցումները կատարել զարմանալի արագությամբ:

Զսպասելով, գեներալների կողմից պլանների ճշգրտմանը, Նապոլեոնի բանակը անսպասելի շարժեց դեպի հյուսիս՝ ուղիղ դեպի Բեռլին, դեպի Պրուսիայի սիրտը: Պրուսական գեներալները շփոթված էին, վիճում էին ու տատանվում, գորքեր էին տեղափոխում այս ու այն կողմ՝ փորձելով գուշակել, թե որտեղից է լինելու գլխավոր հարվածը: Տրամադրությունը մոտ էր խուճապին: Արդյունքում թագավորը հրամայեց նահանջել՝ գորքերը կրկին կմիավորվեն հյուսիսում և Բեռլինին մոտենալուն պես Նապոլեոնի վրա կհարձակվեն թևերից: Հոհենլոենին հանձնարարվեց ղեկավարել վեջապահ (арьергард) ուժերը՝ պրուսացիների նահանջը ապահովելու համար:

Հոկտեմբերի 14-ին, Յենայի մոտ, Նապոլեոնը հասավ Հոհենլոենին, և նա վերջապես հնարավորություն ստացավ մասնակցել այն ճակատամարտին, որի մասին վաղուց էր երագում: Երկու կողմերի ուժերը մոտավորապես հավասար էին: Բայց մինչ ֆրանսիացիները, թվում էր, թե անկառավարելի և գլխիկոր նետվում են մարտի ստեղծելով անկարգություններ և խառնաշփոթություն, Հոհենլոեն իր գորքերը պահում էր խիստ կարգով՝ ղեկավարելով նրանց ինչպես դիրիժորը կղեկավարեր նվագախմբին: Ճակատամարտն ընթացավ փոփոխական հաջողությամբ, մինչև ֆրանսիացիները գրավեցին Ֆիրցենհայլիզեն գյուղը:



1806 թվականի Յենա-Աուերշտեդտյան ճակատամարտ

Հռիենլոեն հրամայեց զորքերին վերագրավել գյուղը: Հետևելով Ֆրիդրիխ Մեծի ժամանակներից սկսած պրուսական կանոնադրությանը, գնդի ավագ թմբկահարը անխոնջ կերպով թակեց այն ուղիով, որով շքերթների ժամանակ պրուսացի զինվորները շտանդարտներով երթաքայլում էին՝ պահպանելով անբասիր կարգը: Մակայն, այս ամենը տեղի էր ունենում բաց և հարթ տարածքում: Օգտվելով այս սխալից Նապոլեոնի զինվորները թաքնվեցին այգիների ցանկապատերի հետևում և տանիքների վրա: Պրուսացիները դարձան հրաշալի թիրախներ դիպուկ հրաձիգների համար: Հռիենլոեն շվարեց և հրամայեց զինվորներին կանգ առնել ու վերակառուցվել: Կրկին լսվեց թմբուկների ձայնը, զինվորները գերազանց ճշգրտությամբ սկսեցին կատարել նոր հրահանգը, սակայն նույն երթաքայլերով՝ շարունակելով մնալ ֆրանսիացիների տեսադաշտում որպես խոցելի թիրախ: Ֆրանսիացիներին մնում էր շարունակել դիպուկ կրակը և ջախջախել պրուսացիների հստակ շարքերը:

Նախկինում Հռիենլոեն երբեք չէր բախվել նման բանակի: Ֆրանսիացի զինվորները նման էին դևերի: Նրանք կարգապահ զինվորականների նման չէին, շարժվում էին այնպես, ինչպես ցանկանում էին, բայց նրանց խելագարության մեջ համակարգ կար: Իշխանը հրամայեց նահանջել: Յենայի ճակատամարտը տանուլ էր տրված:

Պրուսական կայսրությունը խաղաքարտերից պատրաստված տան պես փլուզվեց: Պրուսացիները մեկը մյուսի հետևից հանձնում էին ամրոցները: Թագավորը փախավ արևելք: Մի քանի օրվա ընթացքում փառաբանված բանակից ոչինչ չմնաց:

Մեկնաբանում

1806 թվականին պրուսացիները բախվեցին իրականությանը, և պարզվեց, որ նրանք պարզապես հիսուն տարի հետ են մնացել կյանքից: Նրանց ավագ գեներալները, ժամանակակից պայմաններին համապատասխանելու փոխարեն, կրկնում էին հին բանաձևերը՝ դրանք վերցնելով անդառնալիորեն հեռացած անցյալից: Նրանց բանակը սակավաշարժ էր, զինվորները կարող էին միայն ավտոմատ կերպով ցուցադրել հնարքները և շարակարգումը, ինչպես շքերթի ժամանակ: Վերջին արշավներում

բանակն իրեն դրսևորեց ոչ լավագույն ձևով, շատ պրուսացի սպաներ վաղուց արդեն խոսում էին բարեփոխումների անհրաժեշտության մասին, և որ ամենակարևորն է հրամանատարների տրամադրության տակ կար տասը տարի, որպեսզի ծանոթանային և ուսումնասիրեյին Նապոլեոնի պատերազմ վարելու ոճը, նրա նորարարական ռազմավարությունները, արագությունն ու շարժունակությունը, որոնցով առաջնորդվում էին ֆրանսիական դիվիզիաները:

Իրականությունը նրանց առջև էր և նայում էր նրանց դեմքին, բայց նրանք գերադասեցին աչքերը փակել: Եվ իսկապես, նրանք բազմակի անգամ են կրկնել, որ եթե ինչ-որ մեկը դատապարտված է, ապա դա Նապոլեոնն է:

Կարող է թվալ, որ պրուսական բանակի պարտության մասին պատմությունը միայն հետաքրքիր պատմական անեկդոտ է, բայց մտածեք, թե դուք ա՞րդյոք նույն սխալները չեք գործում: Ոչ միայն ժողովուրդների, այլև անհատների հնարավորությունները սահմանափակող գործոնը իրականության հետ առերեսվելու, իրերն այնպիսին, ինչպիսին կա, տեսնելու անկարողությունն է: Մեծանալով՝ մենք ավելի ու ավելի ենք արմատավորվում անցյալում:

Սովորությունն իր ազդեցությունն է ունենում: Մեզանից շատ առաջ հորինված ինչ-որ բան դառնում է անվիճելի նորմ, հայեցակարգ, և մինչև նույն ժամանակ կեղև իրականությունից պաշտպանվելու համար: Ստեղծագործականությունը փոխարինվում է կրկնությամբ ու հնամուլությամբ: Մենք չենք նկատում, թե ինչ է կատարվում, քանի որ չգիտենք, թե ինչպես հասկանալ մեր սեփական մտքերը, այն, ինչ տեղի է ունենում մեր իսկ գլխում: Եվ հանկարծ համարձակ նորարար Նապոլեոնը փակում է մեր ճանապարհը, նա չի վերաբերվում ավանդույթին երկյուղվածությամբ, նա պայքարում է նորովի: Միայն դրանից հետո ենք նկատում, որ մեր կարծիքներն ու արձագանքները անհույս հնացած են:

Ոչ մի դեպքում մի մտածեք, որ ձեր անցյալի արժանիքներն ու ձեռքբերումները հավերժ կգնահատվեն: Ըստ էության, անցյալի այս արժանիքները ձեզ համար ամենամեծ խոչընդոտն են: Բոլոր մարտերը տարբեր են, յուրաքանչյուր ռազմական արշավ տարբերվում է մյուսներից, և չպետք է թույլ տալ նույնիսկ այն միտքը, որ հաջողվածը մի ժամանակ կաշխատի նաև այսօր: Դուք պետք է ազատվեք անցյալից և համարձակորեն նայեք ներկային: Անցյալի պատերազմներին կառչած մնալը կարող է հանգեցնել ձեր վերջին պատերազմին:

ՆԵՐԿԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ



1605 թվականին՝ քսանմեկամյա սամուրայ Միյամոտո Մուսասին, ով իր երիտասարդ տարիքում հիանալի սուսերամարտիկի համբավ ուներ, կանչվեց մենամարտի: Մենամարտի հրավիրած Մատաշիչիրո անունով երիտասարդը պատկանում էր Իոսիոկայի տոհմին, որը նույնպես հայտնի էր իր սուսերամարտի արվեստով: Մեկ տարի առաջ Մուսասին մենամարտում հաղթանակ էր տոնել Մատաշիչիրոյի հոր՝ Գենզաեմոնի նկատմամբ: Մի քանի օր անց մեկ այլ մենամարտում նա սպանեց Գենզաեմոնի կրտսեր եղբորը: Իոսիոկայի ընտանիքը ցանկանում էր վրեժխնդիր լինել:

Մուսասինի ընկերները, կասկածելով, որ դա ծուղակ է, առաջարկեցին ուղեկցել նրան, սակայն նա հրաժարվեց և գնաց մենակ: Իոսիոկայի ընտանիքի անդամների

հետ նախորդ մենամարտերում նա հակառակորդներին նյարդայնացնում էր մեկ ժամ ուշացումով: Այս անգամ, սակայն, նա հայտնվեց բոլորից շուտ և թաքնվեց ծառի հետևում: Մատաշիչիրոն դեպքի վայր ժամանեց փոքր ջոկատով:

- Ինչպես միշտ, Մուսասին կուշանա, - հայտարարեց եկածներից մեկը, - բայց այս համարը մեզ հետ այլևս չի անցնի:

Վստահ լինելով, որ դարանակալումը կաշխատի, Մատաշիչիրոյի մարդիկ թաքնվեցին բարձր խոտերի մեջ: Հանկարծ, դուրս ցատկելով ծառի հետևից Մուսասին բղավեց «Ես բավականին երկար եմ սպասել: Մերկացրու սուրդ»:

Մեկ արագ շարժումով նա սրախողող արեց Մատաշիչիրոյին և մարտական դիրք գրավեց: Անակնկալի գալով սամուրայները սարսափած վեր թռան և երիտասարդին շրջապատելու փոխարեն բաց շղթայով կանգնեցին: Մուսասին, վազելով, մի քանի ակնթարթում մեկը մյուսի հետևից թրատեց շփոթված սամուրայներին:

Այս հաղթանակը ամբողջ Ճապոնիայում ամրապնդեց Մուսասիի հեղինակությունը՝ որպես վարպետ սուսերամարտիկի: Այժմ նա՝ նոր մենամարտերի առիթ փնտրելով շրջում էր երկրով մեկ: Քաղաքներից մեկում նա լսեց Բայկեն անունով մի ռազմիկի մասին, որը պարտություն չէր կրել: Նա մենամարտում էր մանգաղով և երկար շղթայով, որի ծայրին ամրացված էր պողպատե գունդ: Մուսասին ցանկացավ տեսնել այդ զենքերը գործողության մեջ, բայց Բայկենը հրաժարվեց: Միակ միջոցը, որով նա կարող էր տեսնել այդ զենքերի աշխատանքը՝ մենամարտն էր:

Եվ կրկին Մուսասիի ընկերները անհանգստացան: Նրանք համոզում էին սամուրային փախչել: Մինչ այժմ ոչ ոք չէր կարողացել հաղթել Բայկենին: Ամբողջ ուժով գունդը պտտելով, Բայկենը, տապալում էր հակառակորդին, իսկ հետո սարսափելի հարված հասցնում դեմքին: Հակառակորդն ակամայից երեսը պաշտպանելու համար փորձում էր ետ մղել գունդն ու շղթան, և մինչ սուրը զբաղցնում էր ձեռքը, Բայկենը ակնթարթորեն մանգաղով կտրում էր նրա վիզը:

Անտեսելով ընկերների նախազգուշացումները՝ Մուսասին մարտահրավեր ուղարկեց Բայկենին և հայտնվեց նշված վայր՝ երկար ու կարճ թրերով: Բայկենը նախկինում երբեք չէր տեսել, որ որևէ մեկը մենամարտի երկու թրով: Մենամարտը սկսվեց: Մինչ Բայկենը պատրաստվում էր հարձակվել, Մուսասին առաջինը հարձակվեց ու ստիպեց նրան հետ քաշվել՝ թույլ չտալով ուշքի գալ: Բայկենը ցանկանում էր գունդը նետել, բայց տատանվում էր, վախենալով, որ Մուսասին մեկ թրով կպաշտպանվի, իսկ երկրորդով կհարվածի իրեն: Մինչ նա սպասում էր տեսնելու, թե արդյոք հակառակորդը կբացվի, Մուսասին անսպասելիորեն հրեց նրան այնպես, որ Բայկենը կորցրեց հավասարակշռությունը, և ակնթարթորեն հարձակուրդ կատարելով իր երկար թրով խոցեց մարտարվեստի անպարտելի վարպետին:

Անցավ ևս մի քանի տարի, և Մուսասին տեղեկացավ հոչակավոր սամուրայ Մասակի Գենրյուի մասին, ով մենամարտում էր չափազանց երկար թրով՝ ինքնին հիանալի զենք, և բացի այդ, թվում էր, թե Գենրյուին ներշնչված էր ինչ-որ ռազմատենչ ոգով: Այդպիսի մրցակցի հետ մենամարտը կարող էր որոշիչ լինել Մուսասիի համար: Սամուրայն ընդունեց Մուսասիի մարտահրավերը: Մենամարտը նշանակվեց իր տնից ոչ հեռու գտնվող մի փոքրիկ կղզում: Մենամարտի օրը՝ առավոտյան կղզում խնձոր ընկնելու տեղ չկար: Այդ կարգի մատիկների մենամարտը աննախադեպ իրադարձություն էր: Գենրյուն ժամանակին եկավ, բայց Մուսասին խիստ ուշանում էր: Անցավ մեկ ժամը, հետո՝ մյուսը: Գենրյուն սաստիկ զայրացած էր: Վերջապես հեռվում երևաց ափին մոտեցող նավակ: Նավակում գտնվող մարդը պառկած էր, ծուլորեն փոված, ասես կիսաթթուն լինեք, և թվում էր, թե երկար փայտե թիակ էր

տաշում: Դա Մուսասին էր: Երբ նա նայում էր երկնքին, կարելի էր մտածել, որ նա մտորումների մեջ է: Երբ նավակը մոտեցավ ափին, Մուսասին կեղտոտ սրբիչ կապեց գլխին և ցատկեց նավակից՝ ձեռքում պահելով երկար թիակը, առավել երկար քան Գենրյուի թուրն էր: Այս տարօրինակ մարդն իր կյանքի գլխավոր մենամարտին էր եկել գլխին կեղտոտ սրբիչ կապած և թիակով:

Գենրյուն զայրացած բղավեց.

-Դու այնքան էիր վախենում ինձանից, որ դրժեցիր ութին ներկայանալու քո խոստումը:

Մուսասին ոչինչ չպատասխանեց, բայց ավելի մոտեցավ: Գենրյուն արագորեն դուրս քաշեց իր հոյակապ թուրը, իսկ պատյանը նետեց ավազին: Մուսասին ժպտաց.

- Սասակի, դու հենց նոր ստորագրեցիր քո մահվան դատավճիռը:

- Ե՛ս: Կպարտվե՞մ: Անհավական է:

- Ո՞ր մի հաղթողը, - շարունակեց ժպտալ Մուսասին, - պատյանը ծովը կնետի:

Այս անհասկանալի ռեպլիկը միայն ավելի զայրացրեց Գենրյուին:

Եվ այդ ակնթարթին Մուսասին գրոհեց՝ սրածայր թիակն ուղղելով մրցակցի աչքերին: Գենրյուն վեր բարձրացրեց թուրը՝ փորձելով կտրել թշնամու գլուխը, բայց չհաշվարկեց հարվածը և կտրեց միայն երկտակ փաթաթված սրբիչը: Նախկինում նա երբեք չէր վրիպել: Գրեթե միաժամանակ Մուսասին իր փայտե «թուրը» ուղղեց ներքև և հարվածեց՝ տապալելով Գենրյուուն: Հանդիսատեսները չհասցրեցի ախ անել: Մինչ Գենրյուն գետնին թաքտում էր, Մուսասին մահացու հարված հասցրեց նրա գլխին: Այնուհետև, մարտավկաների առջև սիրալիր խոնարհվելով, նա նստեց նավակը և նավարկեց նույնքան հանգիստ ու լուռ, ինչպես եկել էր :

Այդ ժամանակից ի վեր Մուսասին իրավամբ համարվում էր թրի մարտարվեստի անգերազանցելի վարպետ:

Մեկնաբանում

«Հինգ օղակների գրքի» հեղինակ Միյամոտո Մուսասին իր բոլոր մենամարտերում հաղթել է մեկ պատճառով: Նա ամեն անգամ իր ռազմավարությունը հարմարեցնում էր հակառակորդին և փոփոխվող հանգամանքներին:

Մատաշիչիրոյի դեպքում նա որոշեց, որ այս անգամ բոլորից շուտ է գալու, քանի որ նախկինում նա երբեք նման բան չէր արել: Մատաշիչիրոյի ուղեկիցներին, ովքեր թվաքանակով ավելի շատ էին, հնարավոր էր հաղթել միայն անակնկալի բերելով, ուստի նա անսպասելիորեն դուրս ցատկեց թաքստոցից, երբ նրանք պառկեցին խոտերի մեջ: Այնուհետև, սպանելով նրանց առաջնորդին, նա մարտական դիրք զբաղեցրեց՝ կարծես առաջարկելով հարձակվել իր վրա, այլ ոչ թե շրջապատելու նրան, վերջինս անչափ վտանգավոր կլիներ նրա համար: Բայկենին հաղթելու համար նա տիրապետեց երկու թրով մենամարտելու տեխնիկային, այնուհետև սեղմեց նրան՝ թույլ չտալով հարմարվել նոր հանգամանքներին: Ինչ վերաբերում է Գենրյուին, ապա Մուսասին իր անհոգ պահվածքով, թրի փոխարեն թիակով, գլխին կեղտոտ լաթով, տարօրինակ և մշուշոտ արտահայտություններով կարողացավ զայրացնել և նվաստացնել մրցակցին, հանելով նրան հավասարակշռությունից և վերջնական հարված հասցնել, որը ոչ թե սրտին էր ուղղված, այլ աչքերին:

Մուսասիի հակառակորդները հույսները դրել էին մարտական անթերի տեխնիկայի, սուր թրերի կամ այլ զենքերի վրա: Դա նույնն է, ինչ պատերազմ վարել հին ձևերով: Այստեղ և հիմա տեղի ունեցողին զգայուն արձագանքելու փոխարեն նրանք ապավինում էին միայն մարզմանը, տեխնիկային և նախկին զարգացումներին:

Մուսասին հասկացել էր ռազմավարության բուն էությունը, երբ դեռ երիտասարդ էր: Նա հակառակորդների քարցվածությունը շրջեց հենց իրենց դեմ: Առաջին հերթին նա նախապես ուշադիր մտածեց իր առաջին քայլի մասին՝ հնարք, որը կգարմացներ մրցակցին: Անսպասելի մանևրով հակառակորդին հունից հանելուց հետո նա ուշադիր հետևում էր արձագանքին և անմիջապես պատասխան քայլ էր կատարում՝ թույլ չտալով հավասարակշռության գալ և մահացու հարված էր հասցնում:

Պատերազմին պատրաստվելիս դուք պետք է ազատեք ձեր գիտակցությունը առասպելներից և սխալ պատկերացումներից: Ռազմավարությունը գաղափարների կամ գործողությունների հաջորդականությունն չէ, որին պետք է կուրորեն հետևել, ինչպես խոհարարական բաղադրատոմսի: Հաղթելու կախարդական բանաձև գոյություն չունի:

Գաղափարներն ավելի շատ նման են հողին ավելացված պարարտանյութի, դրանք պահվում են ձեր հիշողության մեջ՝ որպես որոշակի հնարավորություններ, և ճիշտ պահին նրանք կարող են ուղղություն առաջարկել, մղել ճիշտ գործողության, համապատասխան ռեակցիայի: Ձեր գլխից հանեք բոլոր ֆետիշները՝ գրքեր, մեթոդներ, բանաձևեր, անպարտելի զենքեր, և սովորեք ինքնուրույն ռազմավարություն մշակել:

*Հետևաբար, ճակատամարտում անհնար է կրկնել ուրիշի
հաղթանակը: Այն ձևավորվում է որպես պատասխան
անընդհատ փոփոխվող հանգամանքների:
Սուն Ցզի (մ. թ. ա. IV դար)*

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐ

Երբ մենք հետադարձ հայացք ենք նետում տիաճ կամ անհաջող փորձին, մեզ մոտ գալիս է անխուսափելի միտք՝ ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել, եթե մենք X-ի փոխարեն ասեինք կամ կատարեինք Y-ը, ախ, եթե հնարավոր լիներ այն վերախաղարկել: Բազմաթիվ հրամանատարներ կորցրեցին իրենց գլուխները մարտի թեժ պահերին, իսկ հետո հետադարձ ուժով վերլուծելով տեղի ունեցածը, պատկերացրին, որ մեկ մարտավարական հնարքի, մեկ մանևրի դեպքում կարող էր փոխվել ճակատամարտի ընթացքը և այլ կերպ որոշվեր դրա արդյունքը:

Նույնիսկ արքայազն Հոհենլոեն տարիներ անց անընդհատ մտածում էր, թե ո՞րն էր իր սխալը, ի՞նչը խանգարեց նրան հետ գրավել այդ գյուղը: Խնդիրը, սակայն, միայն այն չէ, որ մենք բոլորս հաճախ ուժեղ ենք հետին մտքով և ճիշտ լուծում ենք գտնում, երբ շատ ուշ է: Խնդիրն այն է, որ մենք համոզված ենք, որ պատճառը գիտելիքների պակասն է՝ այ, եթե ավելի շատ բան իմանայինք, այ, եթե ամեն ինչ ավելի ուշադիր մտածեինք... Մա, մինչդեռ, բացարձակապես սխալ մոտեցում է: Մեզ ամենից առաջ հուսահատեցնում է այն փաստը, որ մենք ներդաշնակ չենք այն ամենին, ինչ կատարվում է մեր շուրջը, մենք անզգա ենք այն ամենի նկատմամբ ինչ մեզ շրջապատում է: Մենք լսում ենք մեր սեփական մտքերը, ուշադիր ենք լինում անցյալում տեղի ունեցածի նկատմամբ, փորձում ենք կիրառել վաղուց սովորած տեսություններն ու գաղափարները, որոնք ոչ մի աղերս չունեն ներկայի հետ:

Կարևոր է հասկանալ, որ մեծագույն հրամանատարներն ու տաղանդավոր ստրատեգները կարողացան տոնել իրենց հաղթանակները ոչ թե այն պատճառով, որ

նրանք ավելին գիտեին, այլ այն պատճառով, որ անհրաժեշտության դեպքում կարողում էին մի կողմ դնել իրենց կողմնակալությունը և ապավինել ոչ ստանդարտ լուծումներ բերող ստեղծագործականությանը: Գիտելիքը, փորձը և տեսությունը լավ են մինչև որոշակի սահման: Որքան էլ նախապես մտածես, այն չի կարող քեզ նախապատրաստել կյանքի իրական քառսին, անսահման հնարավորությունների կալեյդոսկոպին, չի սովորեցնի հանպատրաստի արվեստը: Պատերազմի մեծագույն տեսաբան Կառլ Ֆոն Կլաուզիցը այն անվանեց «շփում»։ դա իրական կյանքում պատերազմի պլանը գործի դնելու փորձի խոչընդոտներ են, մեր ծրագրերի և իրականում տեղի ունեցածի միջև եղած բացվածքը: Նման անհամապատասխանությունն անխուսափելի է, և հետևաբար, մենք պետք է սովորենք հետևել փոփոխություններին և ճկուն մտքեր ունենալ անսպասելի իրավիճակներում:

Որքան լավ հարմարվենք՝ հասկանալով փոփոխվող հանգամանքները, այնքան ավելի արագ և հաջող կկարողանանք արձագանքել դրանց: Որքան խորանանք անցյալի փորձի կողմնակալ տեսությունների և հիշողությունների մեջ, այնքան ավելի զառանցական և իրականությունից կտրված կլինի մեր արձագանքը:

Անցյալի սխալները վերլուծելը անհրաժեշտ է և կարևոր, բայց ավելի կարևոր է զարգացնել ներկայում կատարվողի մասին մտածելու կարողությունը: Այդ դեպքում ապագայում դուք կվերլուծեք շատ ավելի քիչ սխալներ: Պատկերացրեք, որ ձեր միտքը գետ է, որքան արագ է այն հոսում, այնքան թարմ է ջուրը, այնքան մեծ է նրա էներգիան: Սևեռուն մտքերը, կողմնակալությունները, անցյալի փորձառությունների հիշողությունները (լինի դա ճակատագրի հարվածներ, թե նախկին հաղթանակներ) նման են քարերի կամ ցեխի, որոնք արգելակում են գետի հոսքը, արգելափակում նրա հունը: Ջրի հոսքը դանդաղում է և վերածվում է բորբոսնած, ճահճի: Մշտապես ներքին պայքար մղեք նման միտումների դեմ:

Եթե զգում եք, որ ժամանակն է պայքարել ներքին լճացման դեմ, կան մի քանի տակտիկական հնարքներ, որոնք կարող են օգնել վերականգնել ձեր մտքերի բնականոն հոսքը:

Վերանայեք ձեր համոզմունքներն ու սկզբունքները: Երբ Նապոլեոնին հարցրին, թե պատերազմի վարման ինչ սկզբունքների է հետևում, նա պատասխանեց, որ ոչ մեկին չի հետևում: Նրա հանճարը կապված էր իրավիճակին զգոն արձագանքելու ունակությամբ՝ առավելագույն օգուտ քաղելով դրանից, իսկ տաղանդը հանգամանքներից օգտվելու ունակությունն էր: Նույն կերպ, ձեր միակ սկզբունքը պետք է լինի որևէ սկզբունքի բացակայությունը: Հավատալ, որ կան անվիճելի օրենքներ և հավերժական ճշմարտություններ, նշանակում է կոշտ, ստատիկ դիրքորոշում որդեգրել և ինքներդ ձեզ դատապարտել պարտության: Իհարկե, տեսությանը և պատմությանը ծանոթանալը կարող է ընդլայնել աշխարհընկալումը, միայն անհրաժեշտ է պայքարել վերը նշված կատեգորիաների՝ քարացած դոգմաների վերածվելու միտման դեմ:

Հաճախ խոչնդոտը կրթության մեջ է: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ անգլիացիները, ովքեր Հյուսիսային Աֆրիկայի անապատներում կռվում էին գերմանացիների դեմ, լավ պատրաստված և կրթված էին տանկային մարտեր վարելուն: Կարելի է ասել, որ նրանց գլուխներում մեխված էր այսպիսի պատերազմը վարելու տեսությունը:

Ավելի ուշ, արշավի ընթացքում, նրանց միացան ամերիկյան զորքերը, որոնք շատ ավելի քիչ կրթված էին մարտավարական հնարքների և մեթոդների առումով: Շուտով, սակայն, ամերիկացիները տիրապետեցին մարտերի վարման այնպիսի

ոճին, որն ավելի վատ չէր, եթե ոչ ավելի լավը, քան անգլյացիներինը: Նրանք հարմարվեցին շարժական, փոփոխական կենսապայմաններին և անապատային պատերազմին: Հյուսիսային Աֆրիկայում գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Էրվին Ռոմելը, խոստովանեց, որ «Ամերիկացիները ... Աֆրիկայում ավելի շատ հաջողության են հասել, քան անգլիացիներն իրենց փորձով, դրանով իսկ հաստատելով, որ սովորելը ավելի հեշտ է, քան վերասովորելը»: Ռոմելը ասում է, որ ուսման գործընթացում տարբեր դոգմաները հաճախ այնքան ամուր են տպավորվում գիտակցության մեջ, որ հետագայում դժվար է դրանք փոխել: Եվ ճակատամարտի ամենաթեժ պահին վարժեցված գիտակցությունը կարող էր ձախողվել՝ մարտի անմիջական հանգամանքներին համապատասխան թարմ որոշումներ կայացնելու փոխարեն, անտեղի ներմուծելով բորբոսնած կանոններ: Երբ հայտնվում էր նոր իրավիճակում ավելի լավ է պատկերացնել, որ դուք ոչինչ չգիտեք և պետք է ամեն ինչ սովորեք զրոյից, հաճախ դա այն մոտեցումը, որը օգնում է ձեզ հաղթել:

Մաքրեք ձեր գլուխը այն ամենից, ինչ կարծում էիք, որ հաստատ գիտեք, մի կողմ թողեք նույնիսկ ձեզ համար ամենակարևոր գաղափարներն ու պատկերացումները: Այսպիսով, դուք կազատեք ձեր մտքում այն տարածքը, որն անհրաժեշտ է նորից սովորելու, նոր փորձ ձեռք բերելու համար: Սա է լավագույն դպրոցը: Դուք մարզում եք ձեր սեփական ռազմավարական ունակությունները՝ օտար տեսություններին կուրորեն ապավինելու փոխարենը:

Հիշողությունից ջնջեք անցած պատերազմի իրադարձությունները: Վերջին պատերազմը, որին դուք մասնակցել եք, վտանգ է ներկայացնում, նույնիսկ եթե դրանից հաղթող եք դուրս եկել: Այն դեռ թարմ է ձեր հիշողության մեջ: Եթե հաղթանակը ձերն է, դուք ակամայից կփորձեք կիրառել նույն ռազմավարությունը և նույն հնարքները, քանի որ հաջողությունն է, որ մեզ ծույլ և ինքնագոհ է դարձնում: Եվ եթե դուք պարտվել եք, պարտությունը պետք է ձեզ դուրս մղի, ինքնավստահություն հաղորդի: Մի տրվեք այդ պատերազմի մասին մտորումներին: Դուք չեք կարող դրա մասին անաչառ դատել, և ժամանակ էլ չկա: Փոխարենը, ավելի լավ է ջնջել այն հիշողությունից: Վիետնամի պատերազմի ժամանակ գեներալ Վո Նգուեն Դյապը առաջնորդվում էր մի պարզ կանոնով. հաջող օպերացիայից հետո նա հանդիմանում և քննադատում էր իրեն այնպես, կարծես պարտություն էր կրել: Արդյունքում, նա չէր ուրախանում իր հաջողություններով և հաջորդ օպերացիաներում երբեք չէր կրկնում օգտագործված ռազմավարություններն ու հնարքները: Հին բաղադրատոմսերից օգտվելու փոխարեն նա թարմ հայացքով էր նայում յուրաքանչյուր իրավիճակին:

Ներկա պահի մանրամասներին ուշադրություն դարձնելը լավագույն միջոցն է ձերբազատվելու անցյալի հիշողությունից և մտքից դուրս մղելու վերջին պատերազմը:

Թույլ մի տվեք, որ միտքը լճանա: Երբ մենք երեխա էինք, մեր հետաքրքրասեր միտքը անընդհատ շարժման մեջ էր: Մենք բաց էինք նոր փորձառությունների առաջ և կլանում էինք հնարավոր ամեն ինչ: Մենք արագ էինք սովորում, քանի որ մեզ շրջապատող աշխարհը ակնածանք և հիացմունք էր առաջացնում: Եթե մեզ ինչ-որ բան մերժում էին, մենք արագ հորինում էինք մեր ուզածը ստանալու ամենախորամանկ ուղիները, իսկ հետո ակնթարթորեն մոռանում էինք դժվարությունների մասին, հենց որ տեսադաշտում նոր բան էր հայտնվում:

Ալեքսանդր Մակեդոնացին, Նապոլեոնը և այս առումով բոլոր մեծ ստրատեգները մնացին երեխաներ: Բացատրությունը պարզ է: Լավագույն ստրատեգները պահպանում էին երեխաների ընկալման թարմությունն ու սրությունը, նրանք տեսնում էին իրերն այնպես, ինչպես որ կան: Նրանք ունեին բարձր զգայունություն ինչպես վտանգի, այնպես էլ ընձեռված հնարավորությունների նկատմամբ: Կյանքում ոչինչ չի մնում նույնը, և զարգացող և փոփոխվող հանգամանքներում կողմնորոշվելու համար անհրաժեշտ է արագաշարժ և ճկուն միտք: Մեծ ստրատեգները չէին հետևում հին գաղափարներին, նրանք արձագանքում էին ընթացիկ իրադարձություններին ճիշտ այնպես, ինչպես երեխաները: Նրանց միտքը անընդհատ շարժման մեջ էր, գերված այն ամենով, ինչը հիացնում էր նրանց: Նրանք արագ մոռանում են անցյալը, ի վերջո, ներկան շատ ավելի հետաքրքիր էր:

Հույն փիլիսոփա և մտածող Արիստոտելը կարծում էր, որ կյանքը կարող է սահմանվել որպես շարժում: Այն, ինչ չի շարժվում, մեռած է: Նա, ով շարժունակություն ունի, ավելի շատ հնարավորություններ ունի, ավելի շատ կյանք ունի:

Մենք բոլորս կյանքի սկզբում օժտված ենք Նապոլեոնի շարժական մտքով, բայց տարիքի հետ մենք կորցնում ենք այդ հատկությունները և ավելի ու ավելի ենք հիշեցնում պրուսական հրամանատարներին: Մտածեք այն մասին, թե ինչ կցանկանայիք վերադարձնել ձեր երիտասարդությունից...:

Իրականում, հիմնական բանը, որ իսկապես անհրաժեշտ է, մտքի աշխուժությունն է, որով դուք ժամանակին օժտված եք եղել: Հենց որ նկատեք, որ ձեր մտքերը անընդհատ պտտվում են ինչ-որ առարկայի կամ իրադարձության շուրջ, քշեք դրանք, բոլոր այդ դժգոհությունները, ավստասանքները, մոլուցքները:

Զանք գործադրեք և շեղվեք դրանցից: Վերցրեք երեխաների օրինակը, անցեք մի նոր բանի, որը կարող է ձեզ ամբողջությամբ կլանել՝ մի բան, որն արժե ձեր ուշադրությունը: Մի վատնեք ձեր ժամանակը մի բանի վրա, որը դուք չեք կարող փոխել, որի վրա չեք կարող ազդել: Պարզապես շարունակեք շարժվել:

Ներթափանցեք ժամանակի ոգով: Ռազմական պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ տեղի են ունեցել դասական մարտեր, որոնցում անցյալը բախվել է ներկային՝ բացահայտելով ողբերգական և անհույս անհամապատասխանությունները: Դա տեղի ունեցավ 7-րդ դարում, երբ բյուզանդացիներն ու պարսիկները բախվեցին մուսուլմանականների անթիվ զորքերին, որոնք տիրապետում էին անապատային պատերազմի նոր ձևերին, կամ XIII դարի առաջին կեսին, երբ քոչվոր-մոնղոլների թերթն և մանևրելի ջոկատները ջախջախեցին ռուսների և եվրոպացիների հսկայական բանակները, կամ 1806 թվականին, երբ Նապոլեոնը Յենայում ջախջախեց պրուսացիներին: Յուրաքանչյուր դեպքում նվաճողների բանակը մշակում էր մարտական գործողություններ վարելու նոր միջոցներ՝ հենվելով կամ նոր տեխնոլոգիաների, կամ նոր սոցիալական համակարգի վրա:

Դուք կարող եք վերարտադրել այս էֆեկտը ավելի փոքր մասշտաբով, եթե ուշադիր ուկնդրեք ժամանակի ոգուն: Զարգացրեք նորույթի, դեռ նոր ծագող միտումների հանդեպ հոստառություն, զարգացրեք նաև ճկունություն, որը թույլ կտա յուրացնել նոր միտումները:

Փոխեք ընթացքը: Երբեմն մենք բոլորս պետք է թափահարենք ինքներս մեզ, դուրս գցենք առօրյայի բեռը և ազատվեք համառ անցյալից: Ինչպե՞ս հասնել դրան:

Ձևերը կարող են բազմազան լինել: Կտրուկ փոխեք ընթացքը, փորձեք այս կամ այն կյանքի իրավիճակում հրաժարվել սովորական սխեմաներից և վարվել ոչ թե այնպես, ինչպես նախկինում կանեիք, կամ ինչպես միշտ եք արել, այլ ճիշտ հակառակը: Եթե ձեր կյանքում ինչ-որ բան սխալ է տեղի ունեցել, ապա դա կարող է լինել բավականին բարդ: Փոխեք իմիջը, ներգրավվեք ինքներդ ձեզ համար անսովոր գործի մեջ, բառացիորեն սկսեք ամեն ինչ սկզբից: Նման դեպքերում ուղեղը բախվում է նոր իրականությանը և արթնանում կյանքի համար:

Երբեմն տեղի ունեցող փոփոխությունները կարող են տագնապալի թվալ, բայց դրանք կենսատու են, երբեմն նույնիսկ ինչ-որ չարաճճի բան կա դրանցում:

Մարդկանց միջև հարաբերությունները հաճախ զարգանում են հոգնեցուցիչ կանխատեսելիությամբ: Դուք վարվում եք այնպես, ինչպես միշտ եք վարվել, շրջապատը արձագանքում է այնպես, ինչպես միշտ է արձագանքել, և ամեն ինչ ընթանում է շրջանագծի մեջ, հաստատված սովորության համաձայն: Եթե հանկարծ նոր ձևով վարվեք, ապա կփոխեք իրադարձությունների ամբողջ ընթացքը: Դա արեք ամեն անգամ, երբ ցանկանում եք սրություն հաղորդել կորցրած հարաբերություններում:

Պատկերացրեք, որ ձեր միտքը բանակ է: Բանակները պետք է կարողանան հարմարվել ժամանակակից, բարդ ու քառսային պատերազմին՝ դառնալով մանևրելի, շարժունակ, խուսանավոր: Դրա լավագույն արտահայտությունը մենք տեսնում ենք պարտիզանական պատերազմում, որն օգտագործում է քառսը՝ շփոթությունն ու անկանխատեսելիությունը բարձրացնելով ռազմավարության աստիճանի:

Պարտիզանական ջոկատները չեն կանգ առնել մեկ գյուղը կամ քաղաքը պաշտպանելու համար, նրանց հաղթանակի բանալին անընդհատ շարժման մեջ է՝ միշտ թշնամուց մեկ քայլ առաջ լինելու մեջ: Անտեսելով շաբլոնները նրանք հնարավորություն չեն տա թշնամիներին նշանադրել և հարված հասցնել: Պարտիզանները երբեք չեն կրկնվում, ամեն անգամ նոր մարտավարություն են կիրառում: Նրանք հարմարվում են փոփոխվող իրավիճակին, ներկա պահին, այն տարածքին, որտեղ պատահաբար հայտնվում են: Պարտիզանական պատերազմում չկա ճակատային գիծ, չկա մշտապես տեղադրված հաղորդակցություններ, չկա դանդաղ շարժվող մատակարարող գնացքներ:

Հենց այն պետք է դառնա նոր մտածելակերպի մոդել: Մի կառչեք որևէ մարտավարությունից և ոչ մի դեպքում տեղում չկանգնեք: Ինքներդ ձեզ թույլ չտաք մտավոր ֆիքսվել ինչ-որ բանի վրա, լինի դա որոշակի գաղափար, թե տեղ: Մի կրկնեք նույն մանևրները, որոնք հետ են իրական կյանքից: Հարձակվեք խնդրի վրա տարբեր կողմերից: Գտնվեք անընդհատ շարժման մեջ և թշնամիների համար շատ դժվար կլինի թիրախավորել ձեզ: Օգտագործեք աշխարհում տիրող քառսը՝ դրան տրվելու փոխարեն:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Իմ գեներալներից ոմանք պարտվեցին, քանի որ նրանք ամեն ինչում հետևում էին սահմանված կանոններին: Նրանք գիտեին, թե ինչ արեց Ֆրիդրիխը մի անգամ, ինչ արեց Նապոլեոնը մեկ այլ անգամ: Նրանք միշտ մտածում էին, թե ինչ կաներ Նապոլեոնը...: Ես չեմ թերագնահատում գիտելիքների նշանակությունը ռազմական գործում, բայց եթե պատերազմես ստրկաբար հետևելով կանոններին, անպայման կպարտվես...: Պատերազմը փոխվում է, այն բնութագրվում է առաջընթացով:

Ուլիս Ս.Հրանտ (1822-1885)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Նախորդ պատերազմը կրկնելու իմաստ չկա: Բայց մինչ դուք արմատախիլ անեք ձեր միջից այս կործանարար ցանկությունը, մի մոռացեք, որ ձեր հակառակորդը կարող է նույն բանն անել՝ փորձելով դասեր քաղել անցյալից և հարմարվել ներկային: Ռազմական պատմության ամենախայտառակ ձախողումներից մի քանիսը պայմանավորված են ոչ թե պատերազմի վարման հնացած օրինաչափություններով, այլ ինքավստահ գնահատմամբ, թե ինչպես կվարվի թշնամին:

Երբ, 1990 թվականին, Սադամ Հուսեյնը ներխուժեց Քուվեյթ, նա հավատացած էր, որ Միացյալ Նահանգները դեռ չեն վերականգնվել «Վիետնամական սինդրոմից»՝ Վիետնամում ամերիկյան բանակի խայտառակ պարտության հիշողությունից, և, հետևաբար, նրանք ընդհանրապես չեն ներգրավվի պատերազմի մեջ, կամ, եթե, այնուամենայնիվ, որոշեն, նրանք կնախընտրեն պայքարել նախկին սխեմայի համաձայն՝ փորձելով հաջողության հասնել օդային մարտերում, այլ ոչ թե ցամաքում: Հուսեյնը չէր սպասում, որ ամերիկացի զինվորականները պատրաստ կլինեն նոր տեսակի պատերազմի: Հիշեք. պարտվող կողմը կարող է այլևս երբեք չցանկանալ պայքարել, քանզի ուժեղ կլինի պարտության դառնությունը: Այնուամենայնիվ, և դա հաճախ է պատահում, նա կարող է օգտակար դաս քաղել անցյալի փորձից և առաջ շարժվել: Անհաջողությունները զգուշություն են սովորեցնում: Թույլ մի տվեք, որ թշնամին ձեզ անակնկալներ մատուցի պատերազմում:

Սկիզբը. https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf

Աղբյուրը. <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chitat-onlayn/?page=4&cysclid=m46rhz3285581248106>